

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Թ Ե Ր Թ

ԿԵԴՐ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

(ՀԻՄՆԱԳԻՐ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ)

ԹԻԻ 211

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1947

ՄԻՈՒԹԵԱՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ 5

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՕՆԻՆ ՄԱՍԻՆ

նկրով, ինչպէս նաև յաճախ ներկայ դանուկ-
յով փոխ-Նախագահներու ժողովին:

«Միութիւն»ի Յուլիսի թիւով, ինչպէս նա-
ևս թերթերու մէջ հրատարակուած Բարեգոր-
ծականի թիւ 14 Զեկոյցով այս հարցին շուրջ
հարցորդուած Կեդր. վարչ. ժողովի որոշումնե-
րը ամանց կողմէ սխալ մեկնաբանուած ըլլալով,
կարգ մը շրջանակներու մէջ կը կարծուի թէ
Նախագահ Տիար Արշակ Գարակէօզեան ձեռն-
թափ եղած է իր պարտականութեանց մէկ
մասէն, կամ թէ նոյնիսկ պաշտօնէն քաշուած
է: Եւ այս ըմբռնումով, մեր կողմակերպու-
թեան բարեկամներէն շատեր, այս երկրէն թէ
Եւրոպայէն, իրենց անկեղծ ցաւը կը յայտնեն
այդ մասին:

Նման մտածում մը բացարձակապէս ան-
ճիշդ է: Ժողովական նոր կարգադրութեան ի-
մասուն էր աւելի գործօն դեր մը տալ երեք
փոխ-Նախագահներուն, որոնք այժմ իրենց
սրտեռանդ աշխատակցութիւնը կը բերեն վար-
չական մարզին մէջ, Նախագահին յոյնութիւ-
նը մասամբ թեթեւցնելով:

Միութեան գրամաղլուիներուն ու եկա-
մուսներուն վերահսկողութեան եւ անոնց աշա-
խուհի անասումին հոգը, որուն համար սպա-
սիչ աշխատութիւն մը կը կատարուի տեսա-
կանօրէն, բայց անաշխոյն կը ծանրանայ Նա-
խագահին վրայ, որ այդ պատասխանատու
պարտականութիւնները կը կատարէ, Կեդր.
վարչ. ժողովին և Moody's Investors Serviceի
հետ համախորհուրդ: Միանգամայն, ան միշտ
իրապեղ կը մնայ ընթացիկ գործերու ալ, ամէն
օր կանոնաւորապէս Տնօրէնին հետ խորհր-
դակցելով եւ սեղանի վրայ եղած հարցերը քնն-

Տ. Վ. ՄԱԼԷՉԵԱՆԻ

ՇՆՈՐ ՀԱԿԱՂՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Տ. Վ. Մալէզեան Բարեգէն հետեւեալ հե-
տադէրը գրկած է.—

«Հազիւ ոտքս դրած Ֆրանսայի հողին վը-
րայ, առաջին մտածումս կ'ըլլայ Ամերիկահայ
պատուական ընկերներու եւ բարեկամներու
հրապարակաւ յայտնել իմ եւ կնոջս երայտա-
գիտական զգացումները, այն սիրալիր վերաբե-
րումին համար զոր անոնք ցոյց տուին, մեր
Նիւ Եորք բնակութեան երկամեայ շրջանին:
Մասնաւորապէս Հ. Բ. Ը. Միութեան Կեդր.
վարչ. ժողովին եւ Ամերիկայի Կեդր. Յանձ-
նաժողովին, իրենց կազմակերպած Պատուոյ
Ճաշկերոյթին համար, եւ ամէն անոնց որ մեր
մեկնումին առթիւ համակրական արտայայտու-
թիւններ ըրին, անձամբ, նամակով, հեռագը-
րով, նուէրով, եւ կամ մինչեւ շոգեմաւ այցե-
լութեամբ, մեզի ողջերը մաղթելու համար:

«Ամերիկայօրէն Ամերիկայէն անջինջ պիտի
պահեմ կեանքիս ամէնէն գեղեցիկ եւ սրտա-
պնդող յիշատակը:»

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Միութեան Պատուոյ Անդամ
Տարթ. Ա. Հ. Սիսակեան, Վէրալէյ, Նեպր., որ
միշտ մօտէն շահագրգռուած է անոր ազգա-
նուէր գործունէութեամբ, 2200 տարար գրկած
է մեզի, 1500 տարար ներգաղթի երկրորդ Մի-
լիոն Տարարի հաշուին եւ 700 տարար Միութեան
ձեռնարկներուն ի նպաստ:

Միութեանս վաղեմի բարեկամներէն Տիար Մ. Օհանեան, որ Իզմիրէն սկսեալ հաւատաւոր անդամ մը եղած է եւ վերջին պատերազմէն առաջ Աթէնքի Մասնաժողովին ատենապետութիւնը վարած է երկար տարիներ, 1000 տղար նուիրած է վերջերս, յօգուտ Բարեգործականի կրթական եւ նպաստի գործերուն:



Փոկ-ՆԱԽԱԳԱՀ Տ. Յ. ԹՈՒՂՈՒԳԵԱՆ

ՀԱԳՈՒՍՏԻ ԲԱՇԽՈՒՄ ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐՈՒՆ

Հ. Բ. Ը. Միութեան Պէյրութի Տիկնանց Յանձնախումբը այս տարուան առաջին եւ երկրորդ կարաւաններով ներգաղթող 306 չքաւոր ընտանիքներու անդամներուն զգեստեղէններ բաժնած է հետեւեալ կերպով.—

275 ձեռք հագուստ, 150 ճաքէթ, 213 զոյգ կօշիկ եւ 108 զոյգ գուլպայ:

Միւս կողմէն, Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովը ասկէ առաջ զրկուած 2000 վերարկուներ առանց մաքսէն հանելու երրորդ կարաւանին հետ ուղարկած է Երեւան, Ներգաղթի Կեդր. Կոմիտէի Նախագահ Տ. Բ. Աստուածատուրեանի, տեղւոյն վրայ բաշխուելու համար դարձեալ չքաւոր ներգաղթողներու:

Այս հագուստեղէնները մաս կը կազմեն այն մեծաքանակ առաքումներուն զոր Կեդր. Վարչ. Ժողովը կատարած էր անցեալ տարի, եւ որոնցմէ ուրիշ բաշխումներ եւս հաղորդած ենք կանուխէն, առաւելապէս յօգուտ ներգաղթող կարօտեալներու:

Ներգաղթողներու համար հագուստեղէնի ուրիշ կարեւոր հայթայթումներու կարգին, ինչպէս այս վերջին ամիսներուն Պուրքէշ եւ Հայաստան զրկուածները, 250—է աւելի հակերով, բաւական ժամանակ առաջ առաքում մըն ալ կատարած էինք Պուլկարիա, Ամթորկի միջոցաւ, որուն անկորուստ հասած ըլլալուն լուրը խմացանք վերջերս:

Ն Ե Ր Գ Ա Ղ Թ Ի Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ը

Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան ներք.—

ԹՈՒԱԿԱՆ	ՇՈՒԿԵՆԱԻ
1947 4 Յուլիս	Փոպէտա
25 " "	" "
2 Օգոստոս	Չուկոբ-ֆա
11 " "	Փոպէտա
17 " "	Չուկոբ-ֆա
3 Սեպտեմբեր	Փոպէտա
6 " "	Չուկոբ-ֆա
6 " "	Ռօսիա
6 " "	Փոպէտա

ցարդ հաղորդուած են հետեւեալ մեկնում—

ՆԱԻԱՀԱՆԳԻՍ	ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐ
Պէյրութ	2321
"	3108
Սելանիկ	1947
Պէյրութ (Հալէպէն եւս ներգաղթողներ)	3154
Սելանիկ	2540
Ադեֆսանդրիա (Եգիպտոս)	1680
Սելանիկ	2245
Մարսէյ	3200
Պէյրութ	2606

22801

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԼԳՈՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԱՒՈՐ ՀԱՏՈՐՆԵՐԸ ԳՆԵԼ ՓԱՓԱՔՈՂՆԵՐԸ ԿԸՐՆԱՆ ԳԻՄԵԼ ԿԵԳՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ: ՀՈՆ ԿԸ ԾԱՅՈՒԻՆ ՆԱԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԻՆ ԱԺԱՆԱԳԻՆ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ:

ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ

ՀՈՎԱՆԱՒՈՐԵԱԼՆԵՐՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Անցեալ տարի, երբ Հայրենակցական Միութիւնները Մէկ Միլիոն Տոլարի Հանգանակութեան իրենց լայն մասնակցութիւնը բերեն, Հ. Բ. Ը. Միութենէն խնդրեցին որ իրենց վերաբաժնի գումարները գանգան երկիրներու մէջ գտնուող իրենց չփառքներուն ներգաղթի նախապահածախսը նկատուին:

Այս բանաւոր բաղձանքին սիրայօժար ընդառաջ երթալով, բացորոշ հրահանգներ տուինք արտասահմանի մեր Մարմիններուն, որպէս զի անհրաժեշտ աշխատանքները կատարուին եւ Հայրենակցականներու պարագաներուն ձրիաբար մեկնումը ապահովեն առաջին կարաւաններով: Գծքախտաբար, բազմապիսի խոչընդոտներ յարուցուեցան այս մասին, որոնց դէմ չդադրեցանք բողոքել, մինչեւ Ս. Հայաստանի Կառավարութեան եւ Ներգաղթի կեդր. կոտէի նախագահին:

Երեսնէն հեռագիրներով մեզի հաւաստիքներ տրուեցան թէ այդ ուղղութեամբ լուրջ յանձնարարութիւններ եղած են Ներգաղթի Լիազօր Պատուիրակներուն, որպէսզի մեր խնդրանքներուն առաւելագոյն չափով գոհացում տրուի ներկայ շրջանին: Պաշտօնական այդ յայտարարութիւնները ատենին հրատարակուեցան մեր զեկոյցներով:

Մեզի անցեալ տարիէն դիմում կատարած են 47 Հայրենակցականներ, որոնց բոլորին ալ բաղձանքները արձանագրած ենք եւ համապատասխան յանձնարարութիւնները ուղղած մեր Մասնահիւղներուն՝ Յունաստան, Սուրիա, Լիբանան եւ նոյնիսկ Ֆրանսա եւ Եգիպտոս, այս վերջին երկիրներուն համար նկատի ունենալով ներկայ տարեշրջանին Ներգաղթը:

Ոչ թէ միայն յանձնարարութիւններ ըրած ենք, այլ եւ ընդարձակ քննակցութիւն մը կատարած ենք եւ դեռ կը շարունակենք կատարել, որովհետեւ Հայրենակցականները իրենց պարագաներուն տեսական դժգոհութիւնները մեզի կը ներկայացնեն եւ անոնց դարմանումը կ'ակնկալեն մեզմէ:

Մեր Մասնահիւղներէն հասած տեղեկութեանց համաձայն, ներգաղթի կարաւաններուն հետ նամբայ կը համուին Հայրենակցականներու չփառքներէն մաս մաս, եւ ուրախ ենք այս պարագան հրապարակաւ յայտարարելով: Գիտենք թէ տրտունջներ կը հասնին եւ մնացողներէն, բայց այդ մասին ոչինչ կրնանք ընել եւ անոնք իրենց կարգին պիտի սպասեն:

Ներգաղթի լիազօրներուն քով բարեացակամութիւնը չի պակսիր. հարկ է սակայն միեւնոյն ատեն նկատի ունենալ թէ ներգաղթը կը կատարուի նախագծուած ծրագիրներու համաձայն, իրաքանչիւր կարաւան կը կազմուի գատ գատ շրջաններէ, եւ արհեստաւորներու, մտաւորականներու, դպրոցական տղոց եւնորոշ համեմատութիւններով: Օրինակ, երբ Պէյրութի մօտակայ մէկ աւանին գաղթականները կը փոխադրուին եւ Պէյրութէն մարդ չառնուիր, չենք կրնար սեւէ Հայրենակցականի Պէյրութ գտնուող պարագաները նոյն կարաւանին միացնել տալ: Ի գոյր է այս մասին գանգատիլ ու բողոքել:

Այս առթիւ կը հաղորդենք նաեւ թէ, Միութեանս Արեւելի Մասնահիւղէն ստացուած տեղեկութեանց համաձայն, կարգ մը հայրենակցականներու ներգաղթողներէն 20ական տոլար պահանջուած ըլլալու լուրը անհիմն է բոլորովին:

Վերջապէս անդորրացնելու համար Հայրենակցական Միութեանց հասկնալի մտահոգութիւնը, կը յայտնենք թէ, պատասխանատու շրջանակներէ մեզի տրուած հաւաստիքներուն համաձայն, արձանագրութեան կարգով պիտի մեկնին բոլոր ներգաղթողներն ալ, չփառքներու ձրի նամբորդութեան համար Միութեանս յանձնարարութիւնները նկատի առնուելով: Մեզի կը թելադրուի համբերել: Մեր կարգին միեւնոյն յանձնարարութիւնը կը կրկնենք Հայրենակցական Միութեանց, որոնց պարտաւորուեցանք այս լուսարանութիւնները տալ, վերջ դնելու համար կարգ մը թիրիմացութիւններու:

ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱՐԱՆԱՆՆԵՐԸ ԱՐԳԷՆ 22 ՀԱՁԱՐ ՏԱՐԱԳԻՐՆԵՐ ՓՈՆԱԳՐԵՑԻՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻԹԸ, ԱՅՍ ՎԵՐՁԻՆ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ: ՊԱՏՐԱՍՏԷ՛ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՐԳԻ ԵՐԿՐՈՐԻ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ:

ԶԵԿՈՅՑ Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

1.— Աթէնքէն եւ Սելանիկէն ստացուած հեռագիրներ կը ծանուցանեն որ Օգոստոս 2ին վերջին նաւահանգիստէն 1942 ներգաղթողներ «Զուկոթա» շոգենաւով ճամբայ հանուած են դէպի Պաթում:

Անկէ առաջ, Պէյրութէն «Փոպէտա» շոգենաւը եւս Հայաստան փոխադրած էր 2900 ներգաղթողներու առաջին կարաւանը:

2.— Քանիցս ծանուցինք եւ այս անգամ եւս հարկ կը տեսնենք շեշտել, որ Հայաստանի Կառավարութիւնը եւ Ներգաղթողներու Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէն մեզի հեռագրած են, վերջինը երկիցս, թէ անհրաժեշտ հրահանգները տրուած են Երեւանի Լիազօրներուն, որ ներգաղթի Կոմիտէներուն պարտադրեն որ անպայման հետեւանք պէտք է տան Զ. Բ. Ը. Միութեան կողմէ յանձնարարուած Հայրենակցականներու չքաւոր տեղացիներուն ներգաղթին:

Յաւալի է որ ոմանք դարձեալ դժուարութիւն կը յարուցանեն սին պատճառարանութիւններով, ինչպէս՝ ոմանց ցանկերը զրկուած չըլլալը արդէլք համարելով:

Զ. Բ. Ը. Միութեան, ինչպէս նաև Մէկ Միլիոն Տորբի Հանգանակութեան մասնակցող Հայրենակցականներու ներկայացուցիչներուն կը յանձնարարենք որ ամէն գիւտով թոյլ չի տան Երեւանի հրահանգներուն անսաստել, անրարելի չօրէն մերժելով անցեալ թէ այս տարի յանձնարարուած Հայրենակցականներու տեղացիներուն հայրենադարձը:

3.— «Լրարեր»ի 5 Օգոստոսի թիւին մէջ հրատարակուած «Բաց Նամակ»ով մը, ուղղուած Միութեանս Կեդր. Վարչութեան, ծանրակշիռ մեղադրանքները կ'ըլլան Վենետիկի Միութեան Միարանութեան, ինչպէս նաև Զ. Բ. Ը. Միութեան Միանի Մասնաճիւղին եւ

տեղական Գաղթ. Կոմիտէին հասցէին: Այդ մեղադրանքները հիմնուած են գլխաւորաբար (կովկասահայ) կնոջ մը դանդաղադրին վրայ:

Յոյժ ցաւալի է որ Միութեան Գեւորագելի Հայրերուն կը վերադրուի կաթողիկ կաթօտեալերու միայն բաժնած ըլլալ Նիւ Եորքէն Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ երկու անգամէն Վենետիկ զրկուած 4500 տուրքը, մինչդեռ մեզի հաղորդուած վկայութիւնները եւ բաշխման ցուցակները ճիշդ հակառակը վճարացուցանեն:

Նոյնպէս, մեր Միանի Մասնաճիւղին վարչները, որ խղճամիտ եւ անձնուէր անդամներ են, կը դատաւիտուին թէ անխղճութեամբ կը գործեն, մինչդեռ Նիւ Եորքէն տրամադրուած 1000 տուրքի համետ վարկով գնահատելի բարիքներ սփռած են իրենց շուրջ:

Շատ աւելի ցաւալի է որ կարևորութիւն ընծայուած է, առանց սեւէ նախաքննութեան, ազմկարար եւ խառնակիչ կնոջ մը ցափոտութիւններուն: Յիշեալը նախապէս մեզի ալ որհլած էր մանուածապատ նամակներ, որոնց ստիւ կատարուած քննութեան արդիւնքը շատ աննրպասա եղած է իրեն համար:

Ամէն պարագայի մէջ, ինչպէս որ «Միութիւն»ի Մայիսի թիւին մէջ «Զգուշութիւն» վերնագրին տակ աղղարարած էինք, անպայման հաւատ ընծայելու չէ կասկածելի դժգոհներու զգայացունց նամակներուն, որոնց ետին յաճախ չարաչառութիւնը կը պահուրտի:

Վարիչ-Պատուիրակ
Վ. ՄԱԼԷՋԵԱՆ

Նիւ Եորք, 12 Օգոստոս 1947

Յ. Գ.— Կը խնդրեմ յառաջիկային անձնուպէս ինձի ուղղուելիք նամակները հասցէագրել 11 Square Alboni, Paris (16-e)

HOOSHARAR - MIOUTIOUN

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION 295 FIFTH AVENUE, NEW YORK 16, N. Y.